

Մէկ մասն ալ յայտնեց, թէ վարչական կազմակերպութեան ստիպողականութիւնը կը ճանաչէ, բայց յաջորդ նստին մէջ անոր յօդուած առ յօդուած քննուիլը կ'ուզէ, ո՛չ թէ վերջնական որոշումը:

Վերջնական որոշումն ընդունուեցաւ եւ որոշուեցաւ, որ ժողովն երկու շաբաթէն գումարուի:

Ահա խումբ մը բժիշկներ, որ հիւանդի մը քով կ'երթան եւ անոր հիւանդութեանը անմիջական դարմանի պէտք ըլլալն զգալէն ետքը, որոշում կու տան, որ տասնհինգ օրէն ետքը միանան եւ հիւանդութեանը վրայ խորհրդակցին...:

26 Յուլիս

Սերվիան ալ զինուորական պատրաստութիւններ կ'ընէ. արդեօք սա՞ ալ իւր սահմաններէն գոհ չէ:

Գիտէք որ սահմանէն գոհ չեղողը միշտ մեզի կը վազէ. քանի մը տարիէ ի վեր օտար կառավարութիւններուն սահմանները ուղղելէն ուրիշ գործ տեսած չունինք, եւ մինչեւ որ ամեն մարդ իւր սահմանէն գոհ չլինի՝ հանգիստ քնանալիք չունինք:

Բ. Դուրը հարցուց Սերվիային, թէ ի՛նչ կնշանակեն այդ պատրաստութիւնները: Սերվիան պատասխանեց, թէ ոչինչ կնշանակեն:

Անցեալ անգամ ալ այս պատասխանը տուած էր Սերվիան, եւ մեր կառավարութիւնն ալ այդ պատասխանով գոհ եղած էր:

28 Յուլիս

Պատերազմական նախարար Հիւսէյն Հիւսնի փաշան քանի մը օրէն Ալպանիա պիտի երթայ Տուշինեօն Քարատաղի յանձնելու համար:

Արդեօք Եանիան ալ Յունաստանի յանձնելու համար առաջին նախարար ըն պիտի երթայ, թէ ամենքս մէկանց պիտի երթանք:

29 Յուլիս

Մարդասէր մէկը չկայ, որ մեզի յիսուն հազար ոսկի փոխ տայ...

Բամազանի առթիւ ամսական վճարելու համար ելմտական նախարարութիւնը քանի մ'օրէ ի վեր Ղալաթիոյ փողոցները պտըտեցաւ, որ սեղանաւորներէն յիսուն հազար ոսկւոյ փոխառութիւն մը ընէ, եւ չյաջողեցաւ: